

# ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՀԻՄՆԱՀԱՐՑ ԸՍՏ ՀՈԼԳԵՐ ՊԵՂԵՐՍՈՒՆԻ

### ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հ. Պեղերսընը, Հ. Հյուբշմանի և Ա. Մեյեի հետ միասին, եվրոպացի այն նշանավոր հնդեվրոպաբաններից է, որոնք անուրանալի ներդրում ունեն հայերենի ուսումնասիրության գործում: Ի տարբերություն Հ. Հյուբշմանի և Ա. Մեյեի, որոնց հայերենագիտական ժառանգությունը վերջին տասնամյակներում հրատարակվել է հայերենով և այդ առումով մատչելի է մասնագիտական շրջանակներին, Հ. Պեղերսընի հայերենագիտական հետազոտությունները հրատարակվել են նախորդ դարի սկզբներին Վիեննայում՝ Մխիթարյան հայրերի աշխատասիրությամբ, և այսօր միայն հազվագյուտ օրինակներ են պահպանվել<sup>1</sup>: Եթե Հյուբշմանը և հատկապես Մեյեն զբաղվել են հայերենի տարբեր կողմերի քննությամբ (հնչյունաբանություն, բառագիտություն (մասնավորապես՝ ստուգաբանություն), ձևաբանություն, շարահյուսություն), ապա Պեղերսընի ուսումնասիրությունների ոլորտն այդ առումով նեղ է. նա գերազանցապես զբաղվել է հայերենի բառաքննական և ստուգաբանական հետազոտությամբ: Բացառություն են երկու ոչ մեծածավալ հոդվածները, որոնցից մեկը՝ «Հին հայերեն լեզուի շեշտը»<sup>2</sup> (1904), նվիրված է հին հայերենի բառային շեշտի բնույթի, իսկ մյուսը՝ «Հայերենի դիրքը» (1929), հնդեվրոպական լեզվաընտանիքում հայերենի մերձավոր ցեղակիցների որոշման խնդրին: Ստուգաբանությունը, լինելով խիստ նեղ մասնագիտական ոլորտ, գրեթե դուրս է մնացել լեզվաբանների լայն շրջանակի տեսադաշտից, որի պատճառով Հ. Պեղերսընը, ըստ էության, մոռացված հեղինակ է հայագիտության մեջ<sup>3</sup>: Որքանով մեզ հայտնի է, Հ. Պեղերսընի հայերենագիտական ժառանգության մինչև օրս եղած միակ քննությունը մեզանում է. Աղայանի «Հայ լեզվաբան»

<sup>1</sup> Հ. Պեղերսընի հայերենագիտական հետազոտություններն ամփոփվել են «Նպաստ մը հայ. լեզուի պատմութեան» («Zur armenische Sprachgeschichte», Վիեննա, 1904), «Հայերեն եւ դրացի լեզուները» («Armenisch und die Nachbarsprachen», Վիեննա, 1907) և «Հին հայերենի ցուցական դերանունները» («Les Pronoms demonstratifs de l'ancien arménien. Avec un Appendice sur les alternances vocaliques indo-européennes» (Վիեննա, 1907) գրքերում: «Նպաստ մը հայ. լեզուի պատմության» գրքում իբրև հավելված տեղ է գտել նաև «Հին հայերեն լեզուի շեշտը» հոդվածը (էջ 68-74):

<sup>2</sup> Այս հոդվածը հեղինակը գրել է հայերեն (տե՛ս «Նպաստ մը հայ. լեզուի պատմութեան», էջ 68): Նաև ուշագրավ է, որ տպագրությունից առաջ նա ընթերցել է հիշյալ գրքի շարվածքը և ուղղումներ ու լրացումներ է արել, որով այդ գիրքն, ըստ էության, բնագրային արժեք է ստացել (տե՛ս նույն տեղը, ԱԶԴ, էջ 2):

<sup>3</sup> Իր հայերենագիտական վաստակով մեծանուն հայագետների շարքը կարող է դասվել նաև նորվեգիացի անվանի լեզվաբան Սոֆուս Բուլգեն, որի՝ հայերենին նվիրված ուսումնասիրությունների մի չնչին մասն է միայն թարգմանաբար հրատարակվել «Հանդես անսօրեայի» էջերում:

նության պատմության» 1-ին հատորում տեղ գտած հատվածն է, որը հասկանալի պատճառներով ակնարկային բնութ ունի<sup>4</sup>: Իհարկե, մենք ևս Պեդերսընի հայերենագիտական վաստակի սպառիչ քննություն իրականացնելու նպատակ չունենք. նրա միայն բառագիտական և ստուգաբանական հետազոտությունների հանգամանալից ուսումնասիրությունը կարող է ստվարածավալ աշխատության նյութ դառնալ: Այդպիսի անդրադաձմեր կան Ա. Մեյեի, Յ. Աճառյանի և Գ. Ջահուկյանի ստուգաբանական քննություններում, բայց դրանց միջոցով գրեթե անհնարին է ամբողջական պատկերացում կազմել Պեդերսըն ստուգաբանի մասին, որովհետև սփռված են տարբեր աշխատությունների էջերում: Մեկ բան, սակայն, ակնհայտ է. Պեդերսընի կողմից հայերենի բառամթերքի ստուգաբանությունների զգալի մասն ընդունել են վերոհիշյալ գիտնականները: Դա հիմք է տալիս ասելու, որ նա հայերենի բառագանձի ստուգաբանությունների գործում մեծ վաստակ ունեցող հայերենագետներից է: Առանձին քննության նյութ կարող է լինել նաև նրա «Հին հայերենի ցուցական դերանունները» (1907) աշխատանքը, ուր հեղինակը գրաբարի ցուցական դերանունների՝ Մեյեի կողմից առաջարկված համակարգին հակադրում է իր համակարգը:

Ստորև քննական մոտեցումով անդրադառնում ենք Յ. Պեդերսընի վերոհիշյալ երկու հոդվածներին, որոնք առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն իբրև գիտական հարցադրումներ, այլև այն առումով, որ դրանցից մեկը ներկայացնում է նշանավոր լեզվաբանի հայերենագիտական գործունեության սկզբնական շրջանը, իսկ մյուսը՝ եզրափակիչ:

1. Պատմահամեմատական հնդեվրոպաբանության մեջ իշխող տեսակետի համաձայն ինչպես հ.-ե. նախալեզվին, այնպես էլ հ.-ե. առաջին բարբառներին (կամ լեզուներին) բնորոշ է եղել երաժշտական շեշտը, և միայն պատմական զարգացման տարբեր շրջաններում է նրանցից շատերի բառային շեշտը փոխվել ուժայինի: Բնական է կարծել, որ հայերենը ևս, իբրև հնդեվրոպական լեզու, նախալեզվից անջատվելուց հետո երկար ժամանակ պահպանել է երաժշտական շեշտը: Իր «Հին հայերեն լեզուի շեշտը» փոքրածավալ հոդվածում Յ. Պեդերսընը, հակադրվելով Ա. Մեյեին, պաշտպանում է այն տեսակետը, որ այդ ժամանակաշրջանը ներառում է նաև գրաբարյան փուլը, թեպետև նա չի հստակեցնում՝ գրաբարն ամբողջությամբ, թե՛ միայն նրա սկիզբը, օր.՝ 5-6 դդ.: Պեդերսընի դիտարկմամբ սխալ է այն կարծիքը, թե ձայնավորների՝ շեշտային գործոնով պայմանավորված հնչյունափոխությունը ուժային շեշտի առկայության ապացույց է: Այդպիսի կարծիքի համար հիմք է եղել այն հանգամանքը, որ հին հունարենում և հին հնդկերենում, որոնք ունեցել են երաժշտական շեշտ, վերջինով պայմանավորված հնչյունափոխության դեպքերը քիչ են: Դեռևս 1895-ին Ֆինկը ապացուցել է, որ հնչյունափոխական ազդեցություն կարող է ունենալ նաև երաժշտական շեշտը: Պեդերսընը նշում է լեզվում երաժշտական շեշտի առկայության երկու հիմնական պայման. ա) եթե անշեշտ վանկում «միայն մեղ ձայնավորները իյնան», իսկ «ընդարձակ ձայ-

<sup>4</sup> Տե՛ս Է. Բ. Աղայան, Գայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Եր., 1958, էջ 350-368:

նավորները անկորուստ մնան», բ) եթե անշեշտ վանկերում «երկբարբառներում նեղագոյն տարրը միայն անկորուստ մնայ»<sup>5</sup>: Այս երկու պայմանները նա տեսնում է ինչպես լատիներենում, որին ևս ոմանք վերագրում են ուժային շեշտ՝ մերժելով «հին լատինական քերականներում վկայությունը, որոնք լատիներեն լեզուին շեշտին երաժշտական ըլլալուն յայտնապես կը վկայեն», այնպես էլ հին հայերենում՝ գրաբարում, որովհետև՝ ա) «հայերեն լեզուին անշեշտ վանկերում մեջ *i* և *u* ձայնավորները կ'իյնան, մինչդեռ *e* *a* *o* ձայնավորները անկորուստ կը մնան», բ) *h.-ե. \*ei* և *\*oi* երկբարբառները գրաբարում ձուլվում են *ei*-ի մեջ, իսկ *\*eu* և *\*ou*-ն «երկուքն ալ դարձան *ou*»։ «այս կերպով ծագած *ei*, *ou* երկբարբառները... յետոյ անշեշտ վանկերու մեջ *i* և *u* ձայնավորներուն փոփոխուած կը տեսնենք (իսկ շեշտեալ վանկերու մեջ *էի* եւ *ոյի* փոխուած են)։ նմանապէս *ես* երկբարբառն անշեշտ վանկերու մեջ *էի* կը փոխուի, այսինքն՝ միայն երկբարբառոյն նեղագոյն տարրը կը մնայ անկորուստ»<sup>6</sup>։ Ըստ Պեդերսընի՝ այդ բոլոր հնչյունական («ձայնական») օրենքները կարող են բացատրվել միայն «ձայնահնչման» կորուստով, հետևաբար՝ «հին հայերեն լեզուի շեշտը պետք է որ երաժշտական շեշտ մ'եղած ըլլար»<sup>7</sup>։ Այս առնչությամբ նա մերժում է նաև Մեյեի կարծիքն այն մասին, թե *աստուած* բառի գրբ. սեռականը եղել է *աստուածոյ*, իսկ *աստուծոյ*-ն միջինհայերենյան ձև է։ Որպես իր տեսակետի հիմնավորում՝ նշում է, որ այդ դեպքում հին հայերենի *անուանենը* միջին հայերենում կը դառնար *անունեն* և ոչ թե՝ *անվրնեն*, որպիսին իրականում դարձել է<sup>8</sup>։

Ըստ Մեյեի՝ նախապատմական շրջանում հայերենի բառային շեշտը եղել է վերջընթեր վանկի վրա, որի պատճառով վերջին վանկի ձայնավորը թուլացել է և ընկել։ Դրանով է բացատրվում, որ, օր.՝ *h.-ե. մյուս ցեղակիցների համեմատությամբ հայերենի համապատասխան բառաձևերը մեկ վանկ պակաս ունեն (հմմտ. հուն. πένθε, սնսկ. pañča – հյ. հինգ (<\*penk<sup>w</sup>e), հն. πατήρ, սնսկ. pitar, լատ. pater, գոթ. fadar – հյ. հայր (<\*pəťēr) ևն)։ Այս երևույթը նա բացատրում է գրաբարում ուժային շեշտի առկայությամբ, որը պատմական փուլում փոխարինել էր հնդեվրոպական տոնային կամ երաժշտական շեշտին։ Հին հունարենը և հին հնդկերենը պահպանել են հնդեվրոպական երաժշտական շեշտը, որով էլ պիտի բացատրել այդ լեզուներում *h.-ե. բառաձևերի ավելի լավ պահպանված լինելը*։ Նկատի ունենանալով, որ սլավոնական լեզուներում շեշտը կարող է ընկնել ցանկացած վանկի վրա, «արդեն միայն այդ յուրահատկությունը, ըստ Ա. Մեյեի, ստիպում է ենթադրել, որ սլավոնական շեշտը հնդեվրոպական տոնի ժառանգորդն է»<sup>9</sup>։ Հետևաբար, այդ առումով հին հունարենի և հին հնդկերենի հետ նույն հարթության վրա է նաև ընդհանուր սլավոնական լեզուն կամ սլավոնական նախալեզուն։ Ա. Մեյեի համոզմամբ «հայերենը ոչ ուղղակի, ոչ էլ անուղղակիօրեն հնդեվրոպական տոնի որեւէ հետք*

<sup>5</sup> **Հուլիոս Պեդերսըն**, Նպաստ մը հայ. լեզվի պատմութեան, էջ 70-71:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 71-72:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 72-73, **Ա. Մեյե**, Դասական հայերենի համեմատական քերականութեան ուրուագիծ, Ժնեւ, 1988, էջ 18:

<sup>9</sup> **Meiße A.** Общеславянский язык. М., 1951, с. 127.

չունի»: Նրա կարծիքով հ.-ե. ազատ շեշտը հայերենում վերջընթեր կայունացածի կարող էր վերածվել հարավ-կովկասյան լեզուների ազդեցությամբ, որոնցում «նախավերջին վանկն է շեշտում»: Նա, մասնավորապես, նշում է, որ **«հայացած կովկասյան բնակչության խօսուածքները հանդիսացող Ղարաբաղի եւ Ազուլխի բարբառները** [ընդգծ. իմն է – Վ. Պ.] դասական հայերենի վերջավանկի շեշտը վաղ ևս փոխարինել են վերջընթեր վանկի շեշտով»<sup>10</sup>:

Ա. Մեյեի նշված տեսակետին Յ. Պեդերսընը հակադրվել է նաև ավելի ուշ հրատարակված իր «Հին հայերենի ցուցական դերանունները» գրքում: Նրա կարծիքով հին հայերենի վերջնավանկի ծայնավորի անկման պատճառ կարող էր լինել նաև, այսպես կոչված, «հոգեկան շեշտը», որը, ըստ Բոդունեն դը Կուրտենենի և Եսպերսենի, դրվել է առաջին վանկի վրա: Իսկ որ հին հայերենում բառի առաջին վանկը շեշտվել է, այդ մասին վկայում են հին տեքստերը, որոնցում առաջին վանկի վրա են շեշտը կրել *այնորիկ, այսորիկ, այսպես, այնպես, ահալասիկ* (այստեղ շեշտը երկրորդ վանկի վրա է, բայց դարձյալ՝ ոչ վերջին կամ վերջընթեր) և նման բառերը: Ավելին, այս առումով Մեյեի «տուած տեղեկությունը լիակատար չեն»: Պեդերսընի վկայությամբ «Քերականք կը նշանակեն որ նոյնպես առաջին վանկը կը շեշտուի սա բառերուս մեջ՝ *գոնէ, գուցէ, հիմայ, արդեօք, դարծեալ, բարէ, մանաւանդ, աւասիկ*, եւ դասական թուականներուս մեջ՝ *օրինակ վեցերորդ, տասներորդ*. դարծեալ սա բառերուս՝ *թել, թէպէտ, գրեթէ*»: Յ. Պեդերսընը նշում է, որ այս բառերի մեծ մասը «պարզ առընթերադրութիւնք չեն. բայց այնպիսի բառեր են՝ որոնք իրենց նշանակութեամբն ատակ են սաստկութեան եւ հակադրութեան շեշտն առնելու»<sup>11</sup>:

Եթե մասնագետների կարծիքներն ընդհանուր առմամբ համընկնում են հին հունարենի, հին հնդկերենի, բալթո-սլավոնական, գերմանական և կելտական լեզուների բառային շեշտի բնույթի առնչությամբ<sup>12</sup>, ապա կարծիքները տարբեր են ոչ միայն հին հայերենի, այլև՝ լատիներենի վերաբերյալ: Մ. Նիդերմանի, Օ. Սեմերենյիի և Ի. Տրոնսկու կարծիքով նախապատմական և դասական շրջաններում լատիներենն ունեցել է տոնային շեշտ, իսկ ուժային շեշտի առաջին արձանագրումները վերաբերում

<sup>10</sup> Ա. Մեյե, նշվ. աշխ., էջ 19: Անվանի հայագետի վերոհիշյալ արտահայտության ընդգծված մասի իմաստը չի համապատասխանում պատմական իրականությանը:

<sup>11</sup> **Յուզեր Պեդերսըն**, Հին հայերենի ցուցական դերանունները, էջ 48: Տես նաև նույն աշխատության 44-48 էջերը:

<sup>12</sup> Ընդունելով, որ հին հունարենում և հին հնդկերենում գերակշռել է հնդեվրոպական նախալեզվին բնորոշ երաժշտական, «այլ ոչ թե ուժային շեշտը», Թ. Բարուն, սակայն, կարծում է, որ «հնդեվրոպականից անմիջականորեն ծագած շեշտի համակարգը գոյություն ունի միայն հունարենում և բալթո-սլավոնականում: Դա կարելի է Վեռների օրենք կոչվող հնչյունաբանական երևույթներից բխեցնել նաև գերմանականի սկզբնական փուլի համար» (**Барой Т.** Санскрит, М., 1976, с. 109-110): Ըստ երեվույթին հին հնդկերենի առումով արված վերապահումը պայմանավորված է վերջինի ազատ, «կանոնների ոչ մի պարզ համակարգ» չունեցող շեշտադրությամբ, ի տարբերություն, օր., հին հունարենի, որին բնորոշ է «սահմանափակ ազատ» կամ «երեք վանկերի օրենքով» (Ռ. Յակոբսոն) բնութագրվող շեշտը: Իհարկե, այդ վերապահումը հեղինակին չի խանգարում հ.-ե. շեշտի վերաբերյալ ճշգրիտ տեղեկություններ տալու առումով հին հնդկերենը համարելու «հնդեվրոպական լեզվաընտանիքի երկու գլխավոր անդամներից մեկը»՝ հին հունարենի հետ միասին (տես նույն տեղը):

են մ. թ. V դարին<sup>13</sup>: Ըստ Վ. Լինդսեյի, ընդհակառակն, առնվազն գրական լատիներենի (մ. թ. ա. III դ. կեսերից սկսած) շեշտը ուժային է<sup>14</sup>: Այս առումով սկզբունքորեն տարբեր է Է. Պրոկոշի պատկերացումը: Վերջինս, հիմք ընդունելով Զիրտի՝ հ.-ե. շեշտի քառաշրջան բաժանումը, իտալյան (այդ թվում՝ լատիներենի), կելտական և գերմանական լեզուների շեշտը նախապատմական շրջանում համարում է ուժային. «Յնչունի քանակից կախված ռիթմային շեշտը լատիներենում ավելի ուշ է հաստատվել»՝ վերոհիշյալ շրջանաբաժանման չորրորդ փուլում<sup>15</sup>: Զիրտի տեսակետին, սակայն, միանշանակ չեն վերաբերվել հնդեվրոպաբանները: Մասնավորապես, լիտվերենի շեշտի առնչությամբ հ.-ե. շեշտի մասին Զիրտի աշխատությանը՝ «Յնդգերմանական շեշտը» («Der indogermanische Akzent»), քննադատաբար է անդրադարձել Ֆ. դը Սոյուրը. «Զիրտը ոչ մի պատկերացում չունի «ոլորակային շեշտված վանկ + ակուտային վանկ» («циркумфлектированный ударный слог+акутированный слог») խմբում շեշտի ընդհանուր տեղաշարժի՝ լիտվերենի շեշտի ներկայիս դրության սկզբնաղբյուրի մասին:

Սակայն, վերլուծելով բառափոխությունը, նա այնուամենայնիվ նկատել է, որ «ակուտային վերջավորություններն իրենց վրա են ձգել ոլորակային արմատների շեշտը» .....: Այդ փաստը, նույնիսկ այդ տեսքով շարադրված, կարող էր, օրենքի մասին իսկական պատկերացում չտալով, լույս սփռել առնվազն լիտվերենի բառափոխության վրա: Բայց Զիրտի մոտ այդ փաստը մի շարքում է դրված ուրիշ, անապացուցելի օրենքների ողջ հանրագումարի հետ ..... արդյունքում այն ծիծաղելի լինելու չափ քիչ նշանակություն ունի նույնիսկ բառափոխության ոլորտում»<sup>16</sup>: Եթե նկատի առնենք այն մեծ նշանակությունը, որը համեմատական լեզվաբանության մեջ տրվում է Սոյուրի՝ լիտվերենի շեշտի քննությանը վերաբերող ուսումնասիրություններին<sup>17</sup>, կարելի է կռահել, թե ինչպիսի վերապահությամբ պիտի վերաբերվել նաև Պրոկոշի՝ Զիրտի քառամասնյա շրջանաբաժանման վրա հենվող դատողություններին:

Լատիներենի շեշտի բնույթի վերաբերյալ մասնագիտական տարակարծությունների առնչությամբ ուշագրավ է հատկապես Ի. Տրոնսկու մի նկատառումը, որի համաձայն 19-րդ դարի վերջի լեզվաբաններից ոմանք կասկածի են ենթարկել լատին քերականների ինքնուրույնությունը՝ վերջիններիս ներկայացնելով լատիներենի քերականությունը հունականների հետևողությամբ շարադրելու, հետևաբար՝ հունարենի օրինակով լատիներենին խորթ իրողություններ վերագրելու մեղադրանք<sup>18</sup>: Այս հարցի քննու-

<sup>13</sup> Զմմտ. «Լատիներենի շեշտը գրական փուլի սկզբից մինչև կայսրության դարաշրջանը հիմնականում եղել է տոնի բարձրության կամ երաժշտական շեշտ» (Нидерман М. Историческая фонетика латинского языка. М., 1949, с. 19-20), «...դասական դարաշրջանի լատիներենի շեշտը եղել է երաժշտական և անտիկ շրջանի ավարտին է անցել ուժայինի» (Тронский И. М. Очерки из истории латинского языка, М., 1953, с. 162):

<sup>14</sup> Տե՛ս Линдсей В. М. Краткая историческая грамматика латинского языка. М., 1948, էջ 31:

<sup>15</sup> Տե՛ս Прокош Э. Сравнительная грамматика германских языков. М., 1954, էջ 117:

<sup>16</sup> Фердинанд де Соссюр, Труды по языкознанию. М., 1977, с. 632.

<sup>17</sup> Տե՛ս Дыбо В. А. Работы Ф. де Соссюра по балтийской акцентологии // Фердинанд де Соссюр, նշվ. աշխ., էջ 583-597:

<sup>18</sup> Տե՛ս Тронский И. М., նշվ. աշխ., էջ 163:

թյունը մեր նպատակից դուրս է, բայց պիտի նկատել, որ այդ հանգամանքի բացառումը կամ հաստատումը հնարավոր է միայն երկու լեզուների խորքային գուգադրական քննության դեպքում: Իսկ ընդհանրապես որևէ լեզվի առաջին քերականություն(ներ)ն ստեղծելիս միշտ էլ հեղինակ(ներ)ը նկատի են ունենում արդեն իսկ այդպիսին ունեցող լեզուների քերականությունները: Լատիներենի դեպքում առաջնորդող դեր են ունեցել հունարենի քերականությունները, հետևաբար՝ սկզբունքորեն ճիշտ չի լինի ազդեցությունը բացառելը: Այլ հարց է, թե այդ ազդեցությունը հատկապես որ հարցերում է դրսևորվել և որքան է տևել: Ասվածի վկայություններն են հայերենի հունաբան և լատինաբան քերականությունները, որոնց միացյալ շրջանը տևել է շուրջ մեկ հազարամյակ:

Զնայած որ հ.-ե. բառային շեշտի վերականգնման հարցում մեծ տեղ է հատկացվում նաև *ընդհանուր սլավոներենի և ընդհանուր գերմաներենի* բառային շեշտին, սակայն այդ լեզուների շեշտի բնույթի վերաբերյալ պատկերացումներն անուղղակի են, որովհետև վերջիններս նույն կարգավիճակում են, ինչ որ նախահնդեվրոպական լեզուն: Այսինքն՝ դրանց վերաբերյալ նույնպես գրավոր վկայություններ չկան, և մասնագետները պատկերացում են կազմում միայն ժառանգորդ լեզուների համապատասխան տվյալների համադրության, այն է՝ վերականգնումների միջոցով: Ըստ այդմ՝ թեպետև բոլոր գերմանական լեզուներին բնորոշ է համարվում ուժային շեշտը, այնուամենայնիվ, Վեռների օրենքի հիման վրա *ընդհանուր գերմաներենի* վերագրվում է երաժշտական շեշտ, առանց որի պարզապես հնարավոր չէ բացատրել ընդհանուր գերմանական *f, þ, h* շփականների (որոնք, ըստ Գրիմի օրենքի, առաջացել են հ.-ե. *\*p, \*t, \*k* պարզ խուլերից), ինչպես նաև *s*-ի անցումը *b, d, g, z (>r)* ձայնեղների: Ինչ վերաբերում է *ընդհանուր սլավոներենի* շեշտին, այն վերականգնում են, մասնավորապես, ռուսերենի, սերբոխորվաթերենի և բուլղարերենի տվյալների հիման վրա<sup>19</sup>:

Մեզ հետաքրքրող հարցի առումով կարևոր են այլ իրողություններ: Մասնավորապես. ա) վերոհիշյալ հեղինակների տեսակետները դիտարկելով ժամանակագրական տեսանկյունից՝ տեսնում ենք, որ լատիներենի շեշտի բնույթի (երաժշտակա՞ն, թե՞ ուժային) մասին արժարժումներն ընդհանուր առմամբ վերաբերում են *դասական լատիներենի* շրջանից [մ. թ. ա. 80-30 թթ.]<sup>20</sup> մինչև V դար (ներառյալ *ոսկե* կամ *օգոստոսյան* [մ. թ. ա. 30 - մ. թ. 14 թթ.], *արծաթե* [մ. թ. 14-117 թթ.] և *ժողովրդական լատիներենի* փուլերը) ընկած ժամանակաշրջանին, բայց ոչ՝ լատիներենի *նախապատմական*, այսինքն՝ հ.-ե. նախալեզվից առանձնանալուց հետո մինչև *հնագույն լատիներենի* [մ. թ. ա. 240-80 թթ.] փուլն ընկած ժամանակահատվածին, որը ներառում է մի քանի հազարամյակ, բ) լատիներենի շեշտի՝ երաժշտականից ուժայինի անցումը տեղի է ունեցել երկարատև ժամանակի՝ հարյուրամյակների, եթե ոչ՝ հազարամյակի ընթացքում, ընդ որում՝ ունեցել է նաև միջանկյալ՝ անցումային փուլ. «Չնդեվրոպական ազատ շեշտը մ. թ. ա.

<sup>19</sup> Տե՛ս **Мейе А.** Общеславянский язык, էջ 126-128:

<sup>20</sup> Լատիներենի շրջանաբաժանման մասին տե՛ս **Винничук Лидия**, Латинский язык, М., 1985, էջ 14-15:

1-ին հազարամյակի կեսերից հետո փոխարինվել է առաջին վանկին ամրացված ուժային շեշտով»<sup>21</sup>:

Ինչպես տեսնում ենք, լատիներենի և հին հայերենի բառային շեշտի բնույթի շուրջ ծավալված բանավեճը վերաբերում է մոտավորապես նույն ժամանակաշրջանին, այն տարբերությամբ, որ լատինական գիրը հայկականին նախորդել է շուրջ մեկ հազարամյակով [մ. թ. ա. մոտ 600 թ.], իսկ գրականությունը՝ մոտ 645 տարով [մ. թ. ա. 240 թ.]: Յ. Պեդերսընը և Ա. Մեյեն, ըստ էության, վիճարկում են V դարի գրաբար լեզվի շեշտի բնույթը, մի ժամանակահատվածի, երբ լատիներենի շեշտն արդեն կայունացել էր որպես ուժային: Ի տարբերություն հունական և հնդկական քերականությունների, որոնց գրավոր վկայությունները համապատասխան լեզուների շեշտի բնույթի վերաբերյալ բավականաչափ արժանահավատ են համարվում<sup>22</sup>, իսկ լատիներենն էլ (եթե անգամ կասկածելի համարվեն լատին քերականների որոշ տեղեկություններ) ուսումնասիրողին այդ հնարավորությունն ընձեռում է նրանով, որ անհամեմատ ավելի հին շրջանից է գրավոր կերպով վկայված, ապա հայերենի առաջին քերականություններում առկա նմանօրինակ վկայություններին պիտի վերաբերվել վերապահունով հենց միայն այն պատճառով, որ այդ քերականությունները ձևվել են հունարենի ազդեցությամբ<sup>23</sup>: Հետևաբար, չնայած որ շեշտը վերհատությանին երևութ է, հին հայերենի շեշտի բնույթի մասին դատողությունները կարող են հենվել միայն հատուկային մակարդակի հնչյունաբանական (ավելի ճիշտ՝ հնչյութաբանական) իրողությունների վրա, այսինքն՝ շեշտի գործունեության հետևանքների վրա, որին և դիմել է Պեդերսընը:

Հայ լեզվաբանության մեջ, ցավոք, գրաբարի շեշտը գրեթե չի ուսումնասիրվել արտաբերության բնույթի տեսանկյունից: Մ. Աբեդյանը և Է. Աղայանը, ըստ երևութին, հիմք ընդունելով ձևավորված պատկերացումը, առանց հատուկ քննության, գրաբարում հնարավոր են համարել ուժային շեշտը: Յ. Աճառյանը ևս գրաբարի շեշտը ուժային է համարել, բայց տոնայինի որոշակի երանգավորումով, «նման լատիներենի, ուր շեշտը տոնի վրա ավելացած է առանց նրան բոլորովին ջնջելու»<sup>24</sup>: Եթե «Հին հայերենի հոլովական սիստեմը և նրա ծագումը» գրքում Գ. Ջահուկյանը հնարավոր է համարում հին հայերենի շեշտի թե՛ երաժշտական բնույթը, թե՛ ձևաբանական գործոնով պայմանավորված շարժականությունը և թե՛ այդ երկուսը միաժամանակ<sup>25</sup>, ապա «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» գրքում ավելի հակված է այն համարելու ուժային, «ավելի ճիշտ, ..... մեծ չափով .... պայմանավորված ձևաբանական գործո-

<sup>21</sup> Семереньи О. Введение в сравнительное языкознание. М., 1980, с. 94.

<sup>22</sup> Տե՛ս Meյe A. Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938, էջ 163-164, Семереньи О., նույն տեղում, էջ 89:

<sup>23</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Եր., 1954:

<sup>24</sup> Տե՛ս Մ. Աբեդյան, Երկեր, հ. 6, Եր., 1971, էջ 21, տե՛ս նաև Է. Բ. Աղայան, Գրաբարի քերականություն, հ. I (հնչյունաբանություն), Եր., 1964, էջ 272, Յ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Եր., 1971, էջ 311:

<sup>25</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովական սիստեմը և նրա ծագումը, Եր., 1959, էջ 157-158:

նով»<sup>26</sup>: Հին հայերենի շեշտը ուժային է համարել նաև Հ. Սուրադյանը՝ իր տեսակետը հիմնավորելով թեպետև սեղմ, բայց ուշագրավ քննությամբ<sup>27</sup>: Վերջինիս նկատառումների մեջ կարևոր է հատկապես այն միտքը, որ, հիմք ընդունելով գրաբարյան բառաձևի՝ արևմտյան և արևելյան բարբառներում շեշտի գործոնով պայմանավորված հնչյունափոխական յուրահատկությունները, դրանք բացատրում է *ոչ թե շեշտի դիրքով, այլ՝ բնույթով*, ըստ էության՝ պատկերացումների որոշակի ընդհանրություն դրսևորելով Հ. Պեդերսընի հետ:

Հին հայերենի բառային շեշտի բնույթին անդրադառնալիս պիտի նկատի ունենալ հետևյալը.

ա) Շեշտի երեք տեսակներից *երաժշտականը* բնութագրվում է ձայնային հանգույցների թրթռման հաճախականությամբ, որը կախված է նրանց լարվածությունից (ըստ այդմ՝ լինում է բարձրացող և իջնող), *ուժայինը*՝ ձայնի բարձրությամբ, որը կախված է արտաշնչման ուժից (էքսպիրացիա), *քանակականը*՝ հնչյունի արտաբերության տևականությամբ: Սովորաբար լեզուն/երը ունենում է/են նշված տեսակներից գոնե երկուսը՝ դրանցից մեկի գերակայությամբ, որն էլ բնութագրական է համարվում տվյալ լեզվի համար: Պիտի կարծել, որ հին հայերենն այդ իմաստով բացառություն չի եղել, ինչպես որ բացառություն չէ արդի հայերենը, բացառություն չեն հին և ժամանակակից լեզուներից շատ-շատերը, եթե ոչ՝ բոլորը:

բ) Վերհատույթային հնչյունաբանական երևույթների մասին ճիշտ պատկերացում կարելի է կազմել միայն անմիջական դիտարկումների միջոցով, մի բան, որ հնարավոր չէ այլևս չխոսվող լեզվի համար: Հետևաբար, այս դեպքում մնում են անուղղակի միջոցները, որոնք կարող են լինել երկու տեսակի՝ արտաքին և ներքին: Արտաքին միջոցների թվին պիտի դասել ինչպես ցեղակից լեզուների տվյալները (այսինքն՝ դիմել արտաքին համեմատություններին), այնպես էլ տիպաբանական տվյալները, իսկ ներքին միջոցների թվին՝ սեփական, այն է՝ բարբառային և գրավոր զարգացման փուլերի տվյալները: Այս իմաստով, ինչպես արդեն տեսանք, հայերենը որոշ զուգահեռներ ունի վերոհիշյալ ցեղակիցների, հատկապես՝ լատիներենի հետ: Այսպես, եթե հին հնդկերենի բառային շեշտը կարող էր դրվել ցանկացած վանկի վրա (հմմտ. n-pa-ci-ti «հատուցում», dhā-rá-ya-ti «բռնում է», na-ma-syá-ti «հարգում է», a-pa-rāh-ṛá «ժամանակ կեսօրից հետո»), հին հունարենինը՝ վերջին երեք վանկերի վրա (հմմտ. ἄν-θρ-ω-πoς «մարդ», χῶ-ρα «երկիր, հող», τι-μή «պատիվ»), լատներենի շեշտը վերջընթեր էր<sup>28</sup>, բայց ըստ վանկային ձայնավորի երկարության՝ կարող էր ընկնել նաև վերջից երրորդ վանկի վրա (հմմտ. sci-ín-ti-a «գիտելիք», ín-sñ-la «կղզի», ma-gís-ter «ուսուցիչ», na-tñ -ra «բնություն»), ազատ շեշտով

<sup>26</sup> **Գ. Բ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 347:

<sup>27</sup> Տե՛ս **Հ. Գ. Սուրադյան**, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Եր., 1982, էջ 67-72:

<sup>28</sup> Մասնագիտական շրջանակներում երբեմնի տարածված կարծիքի համաձայն «որոշակի փուլի լատիներեն լեզվում եղել է ուժգնության շեշտ առաջին վանկի վրա» (տե՛ս **Тронский И. М.**, նշվ. աշխ., էջ 159-160 ):



է հատկանշվել նախասլավոնական լեզուն, ապա նախապատմական շրջանում հայերենի շեշտը նույնպես վերջնաբեր էր, ինչպես որ ապացուցել է Ա. Մեյեն: Ըստ Ն. Մառի՝ այն վերջնաբեր է եղել նաև գրաբարյան, այսինքն՝ պատմական փուլում<sup>29</sup>:

գ) Արդի հայերենի որոշ համադրական բարդություններ շեշտը կրում են վերջից երկրորդ, երրորդ, նույնիսկ՝ չորրորդ վանկի վրա (հմմտ. *արդեն, գո՛նե, գո՛ւցե, դարձյալ, թե՛ պետ/և, թե՛ և, իսկույն, հանկարծ, մանավանդ, միթե, նամանավանդ, նույնպես*): Բացառությամբ մեկի՝ *մամանավանդ*<sup>30</sup>, մյուսներն իրենց համարժեքներն են ունեցել հին հայերենում (հմմտ. *արդէն, գոնէ, գուցէ, դարձեալ, թեպէտ, թէև, իսկոյն, յանկարծ, մանաւանդ, միթէ, նոյնպէս*): Գրաբարի քերականություններում նշվում են, որ՝ 1) վերջնավանկում **ը** ունեցողները շեշտը կրում են վերջնաբեր վանկի վրա (աստ**ը**ղ, դուստ**ը**ր, ձեռ**ը**ն, թո՛ռ**ը**ն, մուկ**ը**ն, ձմեռ**ը**ն, թիթեղ**ը**ն ևն), 2) արգելական հրամայականում շեշտվում է **մի** արգելականը (հմմտ. *մի՛ տեսներ, մի՛ խօսեր*), 3) *այսպէս, այդչափ, սո՛յնպէս, ահա՛ւաղիկ, գրե՛ թէ* տիպի կցական բարդություններում շեշտվում է առաջին բաղադրիչը: Պիտի ենթադրել, որ վերոհիշյալ համադրական բարդություններում ևս շեշտվել են միևնույն վանկերը, ինչ որ արդի հայերենում: Ավելին, ըստ ամենայնի՝ գրաբարում ևս վերոհիշյալ ոչ վերջնավանկային շեշտադրության դեպքերը հնաբանություններ են, որոնք փոխանցվել են նախագրաբարյան շրջանից: Եթե վերջնավանկում **ը** ունեցողների՝ առաջին վանկի վրա շեշտ կրելու հիմնավորում է համարվում **ը**-ի թույլ ձայնավոր լինելու հանգամանքը, որի պատճառով նշված դիրքում այն գրության մեջ չի էլ արտահայտվել, ապա մյուսների դեպքում առաջին կամ նախավերջին վանկերի շեշտառությունը պայմանավորված է դրանց տոնային հնչերանգով, իսկ վերջինս էլ՝ բառային իմաստով. դրանք կան վերաբերականներ են (հմմտ. *գոնէ, գու-*

<sup>29</sup> Տե՛ս **Мартъ Н.** Грамматика древнеармянскаго языка (этимология), СПб., 1903, էջ 34: Ն. Մառի օրինակներում բառային շեշտը վերջնավանկի ձայնավորի վրա է, ուստի նա հարկ է համարում պարզաբանել. «Թյուրիմացությունից խուսափելու համար մեկ անգամ էլ կարելի է հիշեցնել (§51), որ բերված օրինակներում շեշտի՝ առերևույթ վերջին վանկի վրա գտնվելու դեպքերը կախված են իրականում վերջին ձայնավորի, որը վանկ է կազմում առանց շեշտի, միայն թվացյալ անհետացումից» (նույն տեղում, էջ 37): Այսպես, ըստ Մառի՝ գրաբարյան **դո՛ւստ՝ր** բառածևը նախնական **դուստեար** հիմքի երրորդային հնչյունափոխված ձևն է. առաջնայինն է **\*դուստեր**, երկրորդայինը՝ **դուստեր**, որի «շարժական» («подвижной») ու ձայնավորը սեռ.-տր. հոլովածուն թուլանում է՝ վերածվելով «կիսածայն» **ը**-ի: Շեշտի տեղաշարժը ավելի լավ է երևում հետևյալ օրինակներում. հմմտ. **փախուստ**, փխնկ. **\*փախուստի՛ փախուստեա** (**փախուստեան**) հիմքից, **ժողովուրդ**, փխնկ. **\*ժողովուրդի՛ ժողովուրդեա** (**ժողովուրդեան**) հիմքից (նույն տեղում, էջ 50): Ինչպես առհասարակ, այս գրքում ևս Մառի տեսակետներն աչքի են ընկնում զգալի ինքնատիպությամբ: Դրանք սեփական քննության արդյունք են և էպես տարբերվում են «Նոր ուսմունքում» արտահայտված գաղափարներից, որովհետև գրաբարի քերականությունն ուսումնասիրելու շրջանում Ն. Մառն ընդհանուր առմամբ պատմահամեմատական լեզվաբանության սկզբունքների կրողն էր: Չնայած որ «Չին հայերենի քերականություն» գրքի առաջաբանում արդեն իսկ գրաբարի բնույթի վերաբերյալ արտահայտել է անընդունելի գաղափարներ, բայց ինչպես նկատել է նաև է. Աղայանը, լեզվի փաստական նյութը քննելիս՝ դրսևորել է բարձր գիտականություն և խորիմացություն (տես է. Բ. Աղայան, Գայ լեզվաբանության պատմություն, հ. 2, եր., 1962, էջ 117): Եվ իսկայես էլ նրա «Քերականությունը» գրաբարի ամենից արժեքավոր ուսումնասիրություններից է:

<sup>30</sup> «Մամանանդի» սաստկական երանգավորումով տարբերակն է, որը, կարծում ենք, ուշ շրջանի կազմություն է և ըստ ամենայնի՝ ունի ժողովրդախոսակցական ծագում:

ցէ, թեպէտ, թէեւ, մանաւանդ, միթէ), կամ մակբայներ են (հմմտ. դարձեալ, իսկոյն, յանկարծ), կամ էլ՝ դերանուն (հմմտ. նոյնպէս), որոնք բոլորն էլ գնահատողական վերաբերմունքի կրողներ են, այն է՝ խոսքի եղանակավորիչներ: Իսկ այդպիսի բառերուն շեշտը, խոսողի վերաբերմունքից կախված, կարող էր ընկնել ցանկացած վանկի վրա: Զետևաբար, **այդ սակավաթիվ բառերը նախագրաբարյան փուլից մեր օրերն են հասցրել հին հայերենի բառային շեշտի կարևոր յուրահատկություններից մեկը՝ ոչ վերջնավանկային շեշտադրության սկզբունքը:** Եթե գրաբարին անմիջականորեն նախորդող դարերուն հայերենի շեշտը եղել է վերջընթեր, ապա բացառված չէ, որ էլ ավելի վաղ ժամանակներուն այն կարող էր լինել նաև ազատ, ինչպես հին հնդկերենի շեշտը, սահմանափակ-ազատ, ինչպես հին հունարենինը, դրվել առաջին վանկի վրա, ինչպես գոթերենինը<sup>31</sup>, կամ ունենալ լատիներենի շեշտին բնորոշ հատկությունները:

դ) Կարծում ենք՝ ասվածը հնարավոր է դարձնում երկու ընդհանրույթի ձևակերպումը. 1) **շեշտի արտաբերական և դիրքային նկարագրերը որոշակիորեն փոխալայնամակրված են. երաժշտական (տոնային) շեշտի առկայությունը որևէ լեզվում ենթադրում է նաև դիրքայնորեն ազատ կամ սահմանափակ-ազատ շեշտի առկայություն և ընդհակառակն՝ դիրքայնորեն կայուն շեշտի առկայությունը ենթադրում է ուժգնության շեշտի առկայություն:** Շեշտի դիրքային կայունության սկզբունքից շեղումները, պիտի կարծել, երբեմնի տոնային շեշտի մնացուկներ են տվյալ լեզվում. 2) **կարծ և երկար ձայնավորներ (նաև՝ երկբարբառներ) տարբերակող լեզուներին առավելապես բնորոշ է երաժշտական շեշտը, իսկ դրանցից միայն մեկ տեսակը (սովորաբար՝ կարծը) ունեցողներին՝ ուժայինը:**

Պիտի կարծել, որ նախագրաբարյան հայերենի շեշտը, հնարավոր է, մինչև մ. թ. սկիզբը եղել է տոնային կամ էլ բացառված չէ՝ երկբնույթ՝ տոնային-ուժգնությամբ<sup>32</sup>, իսկ գրաբարյան փուլում այն գերազանցապես վերածվել էր ուժգնության շեշտի: Դա նշանակում է, որ մինչև այդ շրջանը հին հայերենում գոնե մասնակի դրսևորումներով պիտի որ պահպանված լիներ կարծ ու երկար ձայնավորների հակադրությունը, որը, սակայն, ամբողջությամբ քայքայված էր գրերի գյուտին նախորդող շրջանում: Զետևաբար, իրականությունից շատ հեռու չէր Զ. Պեդերսընը՝ հին հայերենին վերագրելով երաժշտական շեշտ, որովհետև՝ ա) երբ չկան ուղղակի վկայություններ, որևէ հատկանիշի վերագրումը միշտ էլ վարկածային է, առավել ևս, եթե խոսքը վաղ ժամանակաշրջանի մասին է, բ) **ըստ էության՝ գրաբարում եղել են երաժշտական շեշտի դրսևորումներ, որոնք, նախագրաբարյան փուլից պահպանված մնացուկներ էին:**

II. Զ. Զյուբշմանի «Զայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանակներում» («Die Grundlage der Armenischen Sprache im Kreise der indogermanischen Sprachen») շրջադարձային հոդվածի հրատարակումից

<sup>31</sup> Стів Гухман М. М. Готский язык. М., 1958, էջ 47:

<sup>32</sup> Երաժշտականության և տոնայնության բաղադրիչների միաժամանակյա առկայությամբ է հատկանշվում մեկ այլ հ.-ե. լեզվի՝ լիտվերենի շեշտը (տե՛ս Петерсон М. Н. Очерк литовского языка М., 1955, էջ 18-20):

(1875 թ.) 54 տարի անց Յ. Պեդերսընը հրատարակեց «Յայերենի դիրքը»<sup>33</sup> հոդվածը, ուր երեք հայեցակետով՝ «ձայնագարգացման» (ինչպես հնչյունաբանական-Վ. Պ.), «ձայնախօսական» (=ձևաբանական) և «բառամթերքի» (=բառապաշարային), անդրադարձավ հնդեվրոպական լեզվաընտանիքում հայերենի մերձավոր ցեղակիցների խնդրին: Նկատի ունենալով, որ Յ. Յյուրբշմանի հոդվածի հրապարակումից անցել էր ավելի քան դար, և այդ ընթացքում ինչպես առհասարակ պատմահամեմատական լեզվաբանությունը, այնպես էլ հայերենագիտությունը զգալի առաջընթաց էր ունեցել, միանգամայն օրինաչափ պիտի համարել այդ հարցին անդրադարձը ժամանակի ակամավոր հնդեվրոպաբաններից մեկի<sup>34</sup> կողմից, որը պատկառելի վաստակ ուներ նաև հայերենի ուսումնասիրության գործում: Իհարկե, ասվածը ամենևին էլ չի նշանակում, թե պետք էր սպասել մի նոր շրջադարձ, որպիսի նշանակություն ունեցել էր Յյուրբշմանի աշխատանքը: Դեռևս վերջինս իր վերոհիշյալ հոդվածի եզրափակիչ էջում նշում է, որ հայերենի (նաև պարսկերենի) բառապաշարի վատ ուսումնասիրված լինելը, մասնավորապես՝ ստուգաբանական բառարանի բացակայությունը հետազոտողին զրկում է վերջնական եզրակացություններ անելու հնարավորությունից («...մենք դեռ վերջնականապես լուծված չենք համարում հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանում»<sup>35</sup>): Մյուս կողմից՝ Պեդերսընի անցած գիտական ճանապարհին այլևս արգելք էր, որ առանձնահատուկ նորարարության դիմեր այնտեղ, որտեղ դրա հիմքերը չկային: Նա չէր կարող թերագնահատել Յյուրբշման գիտնականի խոսքի արժեքը, մի բան, որ երբեմն նկատվում էր իր հայերենագիտական ուսումնասիրությունների սկզբնական փուլում (հմմտ. «Յյուրբշման [Յայ. Քերկ., Ա. 449] որ այս ամենը (նկատի ունի Ս. Բուզեի որոշ ստուգաբանություններ-Վ. Պ.) բոլորովին անապահով կ'ուզէ համարիլ, իր զգուշաւորութեան մէջ յայտնապէս քիչ մը շատ յառաջ գացած է, որով եւ անզգոյշ եղած»<sup>36</sup>): «Յայերենի դիրքը» հոդվածում ակնհայտ է, որ Պեդերսընի համար Յյուրբշմանի տեսակետները հեղինակավոր են: Պեդերսընն այս հոդվածում ոչ թե փորձում է վերանայել Յյուրբշմանի հիմնարար դրույթը, այն է՝ *հ.-ե. լեզվաընտանիքում հայերենը ներկայացնում է առանձին ճյուղ*, այլ՝ *հ.-ե. լեզվաընտանիքում*

<sup>33</sup> Հոդվածը լույս է տեսել «Յանդէս ամսօրեայի» 1929 թ. տարեկան համարում՝ հ. Պ. Տեր-Պողոսյանի թարգմանությամբ: Թարգմանչի վկայությամբ հոդվածը նախապես տպագրվել է «Ս. Էբերտի Յանրագիտակին մէջ «Յայք» ամուսն ցերքև Բ. լեզու» խորագրով, սակայն հայերեն տարբերակին ինքը նպատակահարմար է համարել «Յայերենի դիրքը» «տիտղոսը տալ» (տես «Յանդէս ամսօրեայ», 1929, էջ 117):

<sup>34</sup> Յ. Պեդերսընը համարվում է ոչ միայն «խոշորագույն մասնագետ կելտաբանության և պատմահամեմատական լեզվաբանության ոլորտում» (Ярцева В., Предисловие // Льюис Г. и Педерсен Х. Краткая сравнительная грамматика кельтских языков, М., 1954, с. 12), այլև նախորդ դարի հմուտ խեթերենագետներից մեկը. նրա գրչին են պատկանում «խեթերենը և մյուս հնդեվրոպական լեզուները» (1938) և «Լիկիերենը և խեթերենը» (1945) աշխատությունները, որոնցում «նպատակ է դրվում որոշել խեթերենի տեղը մյուս հնդեվրոպական լեզուների միջև» (Георгиев В. И., Исследования по сравнительно-историческому языкознанию. М., 1958, с. 11-12): Պեդերսընը համարվում է նաև «նոստրատիկ լեզվաբանության հայրը». 1903 թ. նա է առաջարկել «նոստրատիկ լեզուներ» եզրը լեզվական մակրոընտանիքի իմաստով, ինչպես նաև առաջադրել է ուրալա-ալթայական, հնդեվրոպական և աֆրասիական նոստրատիկ լեզվամիության գաղափարը:

<sup>35</sup> **Յայնրիխ Յյուրբշման**, Յայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2004, էջ 48:

<sup>36</sup> **Յուզեր Պեդերսըն**, Յայերեն եւ դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 16:

**Ուրիշ հայերենի մերձավոր ցեղակցի կամ ցեղակիցների հարցը:** Այստեղ է, որ նրա և Յուրբջանի պատկերացումները որոշ չափով տարբերվում են: Վերջինիս համեմատ Պեդերսընն ընդլայնում է հայերենի մերձավոր ցեղակիցների շրջանակը՝ դրանց մեջ, հնդիրանական և սլավոնաբալթիական լեզուներից բացի, ներառելով նաև հունարենն ու ավբաներենը: Ըստ այդմ՝ նա ուրվագծում է հայերենի մերձավոր ցեղակիցների երեք ուղղություն՝ հունարենը արևմուտքում, սլավոնաբալթիական լեզուները հյուսիսում, հնդիրանականները՝ արևելքում: Պեդերսընի կարծիքով ավբաներենը, «գոր կարելի է հայերենի և սլաւ-բալտերէնի միջև իբրև միջնօղակ մը նկատել», ըստ ամենայնի սլավոնաբալթիական ճյուղից ավելի մերձավոր պիտի համարվեր հայերենին, եթե հին շրջանից գրավոր կերպով վկայված լիներ<sup>37</sup>: Նրա քննության համաձայն հունարենի և հայերենի միջև նկատվող հնչյունաբանական, ձևաբանական և բառապաշարային զուգաբանությունները (95՝ Յուրբջանի ներկայացրած 59-ի դիմաց) զգալիորեն գերազանցում են նույնիսկ հնդիրանականին (53՝ 37-ի դիմաց) և սլավոնաբալթիականին (34՝ 14-ի դիմաց), որոնք Յուրբջանը համարում էր հայերենի երկու մերձավոր ցեղակիցները («...հայերենը արիասլավոնալիտական լեզուների շրջանում կանգնած է իրանականի և սլավոնալիտականի միջև»<sup>38</sup>): Ընդ որում, հունարենի՝ որպես հ.-ե. լեզվաընտանիքում հայերենին ամենից մերձավոր ցեղակցի մասին տեսակետը, Պեդերսընն արտահայտել էր ավելի վաղ՝ 1907-ին, «Հայերեն և դրացի լեզուները» գրքում (հմմտ. «... հայերէն լեզուն հնդեւր. ուրիշ որեւէ լեզուի այնչափ մերձաւոր չէ՝ որչափ յունարենի»<sup>39</sup>), իսկ այստեղ պարզապես կրկնում էր այն:

Հ.-ե. լեզվաընտանիքում հայերենի մերձավոր ցեղակցի հարցին հետազայում ևս շատերն են անդրադարձել, և կախված կիրառված չափանիշներից՝ արդյունքները հաճախ զգալիորեն տարբեր են<sup>40</sup>: Հ. Յուրբջանի վերոհիշյալ հոդվածի հրապարակումից մոտ քսան տարի անց՝ 1896 թ., «Հայերենի բարբառային դիրքը» («Position dialectale de l'arménien») հոդվածում այդ հարցին անդրադարձել է Ա. Մեյեն: Վերջինիս քննության արդյունքների համաձայն, որոնք ներառում են հնչյունաբանական և քերականական զուգաբանությունները, հ.-ե. լեզվաընտանիքում հայերենի մերձավոր ցեղակիցներն են հնդիրանական, «լետասլավոնական» լեզուները և հունարենը, «սակայն ոչինչ մեզ թույլ չի տալիս հայերենն առանձնապես սերտ կապելու այս երեք բարբառներից մեկի հետ»<sup>41</sup>: Այսինքն՝ Յուրբջանի տեսության համեմատ Մեյեն հայերենի մերձավոր ցեղակիցների թիվը պարզապես ավելացնում է ևս մեկով՝ հունարենով: Մեր կարծիքով, ամենից արժանահավատ տեսակետներից մեկը հեղինակել է ակադ. Գ. Ջահուկյանը, որի վիճակագրական-զուգադրական քննության համաձայն «հնչյունաբանական և քերականական զուգաբանությունների ամբողջության հաշվառումով, այսինքն՝ ըստ ընդհանուր կառուցվածքային մերձավորության»՝ հայերենին ամենից մոտ է գտնվում հունարենը, ապա հնդկական, խեթա-

<sup>37</sup> Տե՛ս **Հուլգեր Պեդերսըն**, Հայերենի դիրքը, էջ 187:

<sup>38</sup> **Հայնրիխ Յուրբջան**, նշվ. աշխ., էջ 45:

<sup>39</sup> **Հ. Պեդերսըն**, Հայերեն և դրացի լեզուները, էջ 169:

<sup>40</sup> Տե՛ս **Յու. Մ. Գաբրիելյան**, Հայերենի ցեղակցության հարցը, Եր., 1991, էջ 59-90:

<sup>41</sup> **Ա. Մեյեն**, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 17:

լուսավիական, թոխարական լեզուները և փոշուզերենը՝ նշված հաջորդականությամբ<sup>42</sup>, իսկ իրանական, սլավոնական և բալթիական լեզուները (հատկապես վերջինները) ավելի քիչ ընդհանրություններ են դրսևորում:

Ճիշտ է, Յ. Պեդերսընի՝ քննության ենթակա հոդվածում ներգրավված չէ այնքան հարուստ և համակողմանի նյութ (նա ներկայացնում է իր կողմից ուսումնասիրված նյութի մի փոքր մասը միայն), որքան առկա է Գ. Ջահուկյանի հետազոտության մեջ, բայց հիմնական եզրակացությունը նույնն է: Դա ցույց է տալիս, որ դեռևս նախորդ դարի առաջին տասնամյակներին Յ. Պեդերսընն այդ հարցին ճիշտ լուծում է տվել, ինչպես որ իրենից շուրջ կես դար առաջ Յ. Յյուրբլանն էր ճշտորեն որոշել հ.-ե. լեզվաընտանիքում հայերենի տեղի հարցը: Կարևոր է նկատել, որ Պեդերսընի ժամանակ այդ հարցի քննությունը դեռևս սկզբնական փուլում էր, և այնքան հարուստ նյութ չկար կուտակված, որքան կար 20-րդ դարի վերջերին: Եվ եթե Գ. Ջահուկյանի համակողմանի քննության արդյունքները հիմնական հարցում նույնն են, դա անուղղակիորեն վկայում է Պեդերսընի սուր ու խորաթափանց գիտական մտքի մասին, ինչպես նաև այն մասին, որ **Յ. Յյուրբլանից հետո հաջորդ նշանավոր հայերենագետը, որը կարևոր ավանդույնի հ.-ե. լեզվաընտանիքում հայերենի դիրքը որոշելու հարցում, Յ. Պեդերսընն է:** Ուշագրավ իրողություններից մեկն էլ այն է, որ **սատրըմ խմբի լեզու համարվող հայերենի ամենից մերձավոր ցեղակիցը պատկանում է կենտում խմբին:** Այս հարցի պատասխանը նույնպես առաջիններից մեկը տվել է Պեդերսընը դեռևս 1907-ին հրատարակած «Հայերեն և դրացի լեզուները» գրքում. «...ակներե է թե հայերենը satəm-լեզու մըն է. սակայն satəm-լեզուաց մեջ ալ բոլորովին եզական դիրք մը կը գրաւէ եւ ասով ցոյց կու տայ թէ satəm-լեզուաց եւ centum-լեզուաց միջեւ եղած վիհն այնչափ խոր չէ, որչափ յաճախ ընդունուիլ կ'ուզուի»<sup>43</sup>: Այս միտքը հետագայում դարձավ 20-րդ դարի պատմահամեմատական լեզվաբանության կարևոր դրույթներից մեկը, որով և **սատրըմ և կենտում** խմբերի բաժանմանը վերագրվեց պայմանական բնույթ:

Եթե հոդվածի երկրորդ՝ «Ազգակցական յարաբերությունները» մասում Պեդերսընի տեսակետները հատկանշվում են խոր գիտականությամբ, ապա նույնը չի կարելի ասել առաջին՝ «Փոխառության աղբյուրներն ու առնչությունները» մասի վերաբերյալ: Այստեղ, ինչպես և «Հայերեն և դրացի լեզուները» գրքում<sup>44</sup>, նա գրեթե բացառում է հայերենի հնարավոր փոխառությունները կովկասյան լեզուներից: Իսկ եթե ապացուցվի էլ այդպիսի բառերի առկայությունը հայերենում, ըստ Պեդերսընի, դրանք պիտի համարել «...աւելի մնացորդներ նախնագոյն լեզուին այն օտարատոհմ բնակիչներուն, որոնք Հայոց հետ համաձուլուած են»<sup>45</sup>: Այնինչ՝ Ա. Մեյեն, նրանից հետո՝ Յ. Աճառյանը, Գ. Ջահուկյանը և ուրիշներ կովկասյան, այն

<sup>42</sup> Տե՛ս Джаукян Г. Б. Сравнительная грамматика армянского языка. Ер., 1982, էջ 204-205: Նույն տեսակետը ավելի հանգամանալից քննությամբ Գ. Ջահուկյանը կրկնել է «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ (տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 104-105):

<sup>43</sup> **Հուլգեր Պեդերսըն**, Հայերեն եւ դրացի լեզուները, էջ 167:

<sup>44</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 165-167:

<sup>45</sup> **Հուլգեր Պեդերսըն**, Հայերենի դիրքը, էջ 119-120:

է՝ քարթվելական լեզուների հետ հայերենի առնչությունների հարցը քննելիս ցույց են տվել ինչպես հայերենից այդ լեզուներին, այնպես էլ դրանցից հայերենին անցած բազմաթիվ փոխառություններ և հնչյունական ազդեցություններ: Այս առնչությամբ Ա. Մեյեն մասնավորապես գրում է. «Մնում է որպես ուշագրավ փաստ, որ պայթականների և կիսապայթականների համակարգը խուլերի, շնչեղ խուլերի և ձայնեղների եռակի շարքով նույնն է հայերենում և վրացերենում»<sup>46</sup>:

Միանգամայն սխալ և անընդունելի պիտի համարել Պեդերսընի կողմից առաջադրված մեկ այլ վարկած, ըստ որի՝ *հայ* անվանման սկզբնաղբյուրը ասուրական Hatti-ն է, այլ կերպ՝ «հատ»/«հաթ»/խեթ ժողովրդի անվանումը: Իհարկե, դա վարկած է և ոչ թե՛ համոզում, որը նա փորձում է հիմնավորել հռոմեացի և գերմանացի ժողովուրդների պատմությունից բերված օրինակներով, բայց դրանք համարժեք իրողություններ չեն: Եվ առհասարակ, ինչպես նկատել է պրոֆ. Է. Ադայանը, «անհեթեթություն է կարծել, թե որևէ ցեղ իր համար իբր անուն վերցնում է մի ուրիշ ցեղի անուն, որի հետ ոչ խաչավորվել է և ոչ էլ... այնպիսի փոխհարաբերության մեջ է եղել, որ նրա ազդեցությանը ենթարկված լիներ»<sup>47</sup>:

Այսպիսով, նկատի ունենալով վերոշարադրյալը, կարելի է ասել.

ա) Յ. Պեդերսընի հայերենագիտական հետազոտություններն արտացոլում են իր ժամանակի հայագիտության ամենաբարձր մակարդակը: Եթե իր երկու նշանավոր ժամանակակիցներին՝ Յ. Յյուրչմանին և Ա. Մեյեին, նա զիջում է հայերենի ոլորտների ընդգրկմամբ, ապա ամենևին չի զիջում վերլուծական մտքի գիտականությանը: Նրա ուսումնասիրությունները հատկանշվում են խորաթափանցությամբ ու համակողմանիությամբ:

բ) Որևէ լեզվի նախագրային վիճակի մասին արտահայտված տեսակետը միշտ ունի վարկածային բնույթ, հետևաբար՝ հավանականության ուրոշակի աստիճան: Վերհատույթային իրողությունների դեպքում զգալիորեն վարկածային բնույթ ունի նաև հին գրավոր շրջանի վերաբերյալ արտահայտված տեսակետը, եթե այդ շրջանից ուղղակի վկայություններ չկան: Հասկանալի է, որ Պեդերսընի կողմից հին հայերենին երաժշտական շեշտ վերագրելը նույնպես վարկածային բնույթ ունի, բայց տիպաբանական զուգահեռները վկայում են, որ այն հիմնազուրկ չէ:

գ) «Հայերենի դիրքը» հոդվածի առաջին՝ փոխառությունների բաժնում Յ. Պեդերսընը որոշ անընդունելի, ավելին՝ գիտականորեն քննություն չբռնող կարծիքներ է արտահայտում, փոխարենը, սակայն, միանգամայն ճիշտ տեսակետ է զարգացնում հ.-ե. լեզվաընտանիքում հայերենի մերձավոր ցեղակցի որոշման հարցում, որ է հունարենը, չնայած այն իրողությանը, որ ավանդական պատկերացման համաձայն հունարենը *կենտում* խմբի լեզու է, իսկ հայերենը՝ *սատրմ*: Դրանով իսկ դեռևս 20-րդ դարի սկզբներին նա առաջիններից մեկը հ.-ե. լեզուների՝ *սատրմ* և *կենտում* խմբերի բաժանմանը վերագրում է պայմանական բնույթ: Այդ տեսակետն արդի պատմահամեմատական հնդեվրոպաբանության հիմնարար դրույթներից է:

<sup>46</sup> Անտուան Մեյե, նշվ. աշխ., էջ 53 (երկրորդ տողատակ):

<sup>47</sup> Է. Բ. Ադայան, նշվ. աշխ., էջ 366:

դ) Ինչ-ինչ հարցերում վրիպում են նույնիսկ մեծ գիտնականները, և Պեդերսընն այդ առումով բացառություն չէ: Նրա վրիպումները երկու բնույթի են. 1) իր ժամանակի գիտական մտքի մակարդակով պայմանավորված վրիպումներ, 2) սեփական պատկերացումներով պայմանավորված վրիպումներ: Երկրորդ տիպի վրիպումների շարքին է դասվում, օր., կովկասյան լեզուների հետ հայերենի առնչությունների հարցում նրա ունեցած պատկերացումը, որի հիմնական պատճառներից մեկը նրա խիզախող, նոր լուծումների հակված գիտական միտքն էր, որն ինչ-որ իմաստով, թերևս, արտացոլում էր նաև ժամանակի ընդհանուր ոգին: Երբեմն նրան չի բավարարել հենց այն զգուշավորությունը, որը հատուկ էր Հ. Հյուբշմանին: Չպետք է մոռանալ, որ նա նոստրատիկ լեզվաբանության հայրն էր՝ մեկը առաջին գիտնականներից, որոնք, դուրս գալով հ.-ե. լեզվաբանության սահմաններից, խոսեցին լեզվական մակրոընտանիքների գոյության մասին և ուրվագծեցին դրանցից մի քանիսի սահմանները: Նա հայերենը ևս դիտարկել է նոստրատիկ առնչությունների մեջ՝ համեմատելով թուրքերենի, առհասարակ՝ թուրքական, ուզբա-ֆիննական, մոնղոլական և այլ լեզուների հետ, բայց հենց այդ համեմատություններում էլ ակնհայտ են վրիպումները: Որոշ իմաստով Պեդերսընի մասին կարելի է ասել այն, ինչը նա ասել է Ս. Բուզեի մասին՝ վերջինիս նվիրված մահախոսականում. «...Բուզե ռահվիրայ մըն էր, որ մասնաւոր սիրով խուզարկութեան նոր ու դժուարին ճամբաներ հորդելու կ'ելլէր, եւ իւր հիանալի սրամտութեամբ բաւականաչափ արգելքներ բարձած է, բայց միանգամայն այսպիսի նոր խնդիրներու ձեռնարկութեանցը մէջ իւր յանդուզն ենթադրութիւններովը շատ անգամ մոլորած է»<sup>48</sup>:

Հ. Պեդերսընի հայերենագիտական ժառանգությունը հայագիտության անանց արժեքներից է, որը դեռևս սպասում է իր ուսումնասիրողին: Այս հոդվածը մի փորձ է այդ ճանապարհին:

**ВАРДАН ПЕТРОСЯН – *Две проблемы арменистики по Холгеру Педерсену.*** – В научном наследии Холгера Педерсена, выдающегося представителя сравнительно-исторического языкознания конца XIX – первой половины XX века, значительное место занимают исследования по арменистике. Его имя справедливо ставится рядом с именами Г. Гюбшмана и А. Мейе. Значительную часть его арменоведческого наследия составляют труды по лексикологии и этимологии, которые обобщены в книгах «Вклад в историю армянского языка» (1904) и «Армянский и соседние языки» (1907). Не менее ценными представляются исследования «Указательные местоимения древнеармянского языка» (1907), «Ударение в древнеармянском языке» (1904) и «Позиция армянского языка» (1929). В последней из них определяются наиболее близкие к армянскому языку в индоевропейской семье. Все названные работы характеризуются как оригинальностью взглядов, так и высокой научностью.

Х. Педерсен приписывал словесному ударению в древнеармянском языке музыкальную природу. Впрочем, это предположение имеет гипотетический характер, поскольку в его пользу нет весомых аргументов. Тем не менее,

<sup>48</sup> «Հանդէս ամսօրեայ», 1907, էջ 307-308:

некоторые типологические параллели говорят о том, что оно не лишено оснований.

Х. Педерсен объявил греческий язык близкородственным армянскому (на основании фонетических, морфологических и лексических изоглосс). Это стало таким же поворотным событием в сравнительно-историческом арменоведении, как и статья Г. Гюбшмана. К сожалению, оно до сих пор не оценена должным образом.

**VARDAN PETROSYAN – *Two Problems of Armenology by Holger Pedersen.*** – Armenological questions have received a lot of attention in the scientific input of H. Pederson – one of the most famous figures in the field of Comparative Linguistics. His name appears side by side with the names of H. Hubshman and A. Maye. The prevailing part of Pedersen's Armenological heritage presents lexical and etymological research published in his books "A Benefit to the History of the Armenian Language" (1904) and "Armenian and the Neighbour Languages" (1907) but his studies on the demonstrative pronouns ("The Demonstrative Pronouns in Old Armenian") and word stress ("The Stress in Old Armenian"), as well as his works on the Indo-European kindred language of Armenian ("The Position of the Armenian Language" - 1929) are of no less significance for his viewpoints are unique and scientifically grounded.

H. Pederson's idea of the musical nature of the Old Armenian word stress is hypothetical, of course, as there are neither written evidences, nor strong arguments to prove that, though typological parallels show that the idea is not groundless. Likewise there are no arguments either to consider that the Old Armenian word stress has a dynamic nature.

H. Pederson's consideration of the Greek language being an Indo-European kindred language to Armenian based on phonetic, morphological and lexical parallels was the second turning point in Comparative Armenian Studies of Armenian after Hyubshman's well-known article was published. However the idea has not been evaluated as such up to this day.

H. Pederson's Armenological investigations are not, however, devoid of shortcomings. They are of two types: those based on his personal understanding and those conditioned by the development of the scientific thought of his time.